Կարգապահական գործ թիվ ԿԳ-24158

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՓԱՍՏԱԲԱՆ ԷԴՎԱՐԴ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՉԻՆԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարեն Խալաթյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի, Արաքս Վարդանյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Էդվարդ Չինարյանի, Կարինե Մինասյանի և Արսեն Մինասյանի,

քննության առնելով փաստաբան Էդվարդ Վոլոդյայի Չինարյանի **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 288), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

Կարինե Մինասյանը **(այսուհետ՝ նաև Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ)**, հայտնել է հետևյալը.

Փաստաբան Էդվարդ Չինարյանը հանդիսացել է Դիմողի և նրա որդու պաշտպանը քրեական գործի շրջանակներում: Դիմողը Փաստաբանի հետ 18.09.2023թ. կնքել է իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր **(այսուհետ՝ նաև պայմանագիր)** և վճարել ծառայությունների դիմաց 350.000 ՀՀ դրամ:

Ըստ Դիմողի՝ Փաստաբանը դժվարությամբ է ներկայացել քննչական բաժին և զբաղվածության պատճառով հորդորել է, որ Դիմողը մենակ գնա քննչական գործողության: Դիմողի պնդմամբ, քննչական բաժին ներկայանալուց հետո Փաստաբանը ապահովել է միայն ֆիզիկական ներկայությունը և որևէ գործողություն չի իրականացրել:

Դիմողը նշել է, որ Փաստաբանը չի ներկայացրել քննչական մարմնին Դիմողի հայտնած տեղեկությունները, հետևողական չի եղել իր գործում, ինչը հանգեցրել է բազմաթիվ խնդիրների քննչական մարմինների հետ:

Թիվ ԿԳ-24158-2-Ա
30.10.2024թ.

Ըստ Դիմողի՝ քննիչն իրեն ներկայացվել է կեղծ մեղադրանք այն դեպքում, երբ հանցագործությունն իր և իր որդու դեմ է կատարվել: Դիմողի պնդմամբ, մեղադրանքի վերաբերյալ Փաստաբանը հայտնել է, որ իրենց իրավունքները կպաշտպանվեն դատական փուլում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դիմողը խնդրել է Փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 05.08.2024 թվականին Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 29.08.2024 թվականին ներկայացված բացատրությամբ ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը: Ըստ Դիմողի՝ Փաստաբանը չի ներկայացել քննչական գործողություններին, չի ուսումնասիրել Դիմողի տված ապացույցները, չի ներկայացել դատական նիստերին, վիրավորել է Դիմողին և հրաժարվել իր պարտականությունների կատարումից:

Դիմողը ներկայացրել է քրեական գործի մանրամասները, ինչպես նաև ներկայացրել է որոշ վարույթային փաստաթղթեր:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Դիմողն ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը՝ հավելելով, որ Փաստաբանն ըստ էության մասնակցել է, ներկա է գտնվել երկու քննչական գործողություններին, և չի ներկայացրել իրեն տրամադրված լուսանկարները:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը Փաստաբանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Կարինե Մինասյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 09.07.2024թ. ներկայացրած բացատրությամբ հերքել է Դիմողի պնդումները՝ նշելով, որ հանդիսացել է միայն Դիմողի որդու պաշտպանը նախաքննության փուլում և բարեխիղճ մասնակցել է բոլոր քննչական գործողություններին:

Փաստաբանը նշել է, որ չի հանդիսացել Դիմողի պաշտպանը, սակայն, իմանալով, որ նրա նկատմամբ հարուցվել է քրեական գործ, օգնության կարգով, մասնակցել է բոլոր քննչական գործողություններին նախաքննության փուլում:

Փաստաբանի պնդմամբ, նրա կողմից էթիկայի որևէ կանոն չի խախտվել, ուստի կարգապահական վարույթի հիմքերը բացակայում են:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 05.08.2024 թվականին Դիմողին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 09.08.2024թ. ներկայացրել է թիվ 10800923 քրեական վարույթի նյութերը:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Փաստաբանն ըստ էության պնդել է նախկինում

ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 11.07.2024թ. թիվ 288-Ա/ԿԳ-24158 որոշմամբ փաստաբան Էդվարդ Չինարյանի նկատմամբ **Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև **Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 2.7.2, 3.5.5 և 3.1.8 ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

18.07.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին, այնուհետև 11.09.2024թ.՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 18.09.2024թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-3-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 30.10.2024թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Էդվարդ Չինարյանը 18.09.2023թ. կնքել է պայմանագիր Դիմողի և նրա որդու Արսեն Մինասյանի հետ, ըստ որի՝ պարտավորվել է պատվիրատուի առաջադրանքով մատուցել իրավաբանական ծառայություններ, այն է՝ ՀՀ ոստիկանությունում, քննչական մարմիններում, դատախազությունում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ներկայացնել իրենց շահերը, կատարել օրենքով վերապահված բոլոր լիազորությունները: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ, ինչպես նաև 18.09.2023թ. պայմանագրով:*

2. Փաստաբան Էդվարդ Չինարյանը ստանձնել է Դիմողի որդու Արսեն Մինասյանի իրավունքների պաշտպանությունը, որտեղ վերջինս ունեցել է տուժողի կարգավիճակ: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

3. Փաստաբան Էդվարդ Չինարյանը ստանձնել է Դիմողի իրավունքների պաշտպանությունը թիվ 10800923 քրեական գործով, որտեղ վերջինս ունեցել է մեղադրյալի կարգավիճակ: *Սույն փաստը հաստատվում է 17.06.2024թ. մեղադրական*

եզրակացությունից:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Էդվարդ Չինարյանը փաստաբան է հանդիսանում 29.10.1996 թվականից, և 2019-2024թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Էդվարդ Չինարյանը նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.1.8 ենթակետերի պահանջների -խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել

փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններ իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում ոչ միայն փաստաբանի կողմից որոշակի վարքագծի դրսևորման հանգամանքը, այլ նաև դրսևորվող վարքագծում Օրենքով և/կամ Կանոնագրքով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների առկայության հանգամանքը, որի պայմաններում միայն Հանձնաժողովը կարող է քննարկել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Այս համատեքստում, Կանոնագրքի մի շարք դրույթների կիրառելիությունը ևս ինքնանպատակ չէ և Հանձնաժողովի կողմից այդ դրույթներով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների համատեքստում փաստաբանի վարքագծի քննարկման իրավական հնարավորությունն ուղղակիորեն փոխկապակցված է որոշակի պայմանների առկայության կամ բացակայության հետ:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի և/կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Տվյալ դեպքում, Դիմողն ըստ էության Փաստաբանին վերագրում է զբաղվածության պատճառով բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու վարքագիծը:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,
գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,
դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Կանոնագրքի 3.1.8-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:*

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Այդ կապակցությամբ, փաստաբանի համար Կանոնագրքով սահմանվում են մի շարք պարտականություններ, որոնց շարքում առանձնակի նշանակություն ունի վստահորդի նպաստավոր շահերից ելնելու և բարեխղճորեն և ժամանակին վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու, պարտականությունը:

Նշվածը ենթադրում է, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում պետք է ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի համար: Ավելին, կնքված պայմանագրի որոշակի առարկայի շրջանակներում փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Վերոգրյալից հետևում է նաև, որ բոլոր այն դեպքերում, երբ փաստաբանի զբաղվածությունը կարող է հանգեցնել հանձնարարության ոչ պատշաճ կատարման, փաստաբանը պարտավոր է զերծ մնալ այդ հանձնարարության ստանձնումից:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Դիմողը և նրա որդին՝ Արսեն Մինասյանը 18.09.2023թ. պայմանագիր են կնքել Փաստաբանի հետ, ըստ որի Փաստաբանը պարտավորվել է պատվիրատուի առաջադրանքով մատուցել իրավաբանական ծառայություններ այն է՝ ՀՀ ոստիկանությունում, քննչական մարմիններում, դատախազությունում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ներկայացնել իրենց շահերը, կատարել օրենքով վերապահված բոլոր լիազորությունները:

Պայմանագրի կնքման պահին Փաստաբանը պետք է ներկայացներ Դիմողի որդի Արսեն Մինասյանի շահերը, ով թիվ 10800923 քրեական գործով ունեցել է տուժողի կարգավիճակ:

Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի պաշտպանությունը փաստացի 2024 թվականի մայիսի 10-ից, երբ Դիմողը ստացել է մեղադրյալի կարգավիճակ:

Դիմողի մասնակցությամբ թիվ 10800923 քրեական վարույթի շրջանակներում իրականացվել է 2 քննչական գործողություն, մասնավորապես՝ տուժող Սոնա Մուրադյանի և մեղադրյալ Կարինե Մինասյանի առերես հարցաքննությունը, ինչպես նաև մեղադրյալ Կարինե Մինասյանի մասնակցությամբ կատարված ցուցմունքի ստուգումը տեղում:

Նախաքննությունն ավարտվել է 2024 թվականի հունիսի 14-ին, իսկ մեղադրական եզրակացությունը կազմվել է հունիսի 17-ին:

Հանձնաժողովը նախ հարկ է համարում ընդգծել, որ դիմումը ստորագրված է անձամբ Դիմողի կողմից, սակայն դրանում նկարագրված են նաև այնպիսի հանգամանքներ, որոնք ուղղակիորեն վերաբերում են Փաստաբանի կողմից Դիմողի որդուն մատուցված ծառայություններին:

Այսինքն, Դիմողը, Կանոնագրքի իմաստով չհանդիսանալով վստահորդ, ըստ էության բարձրացրել է Փաստաբանի կողմից **Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերով** *(Դիմողի որդուն՝ Արսեն Մինասյանին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալը)* նախատեսված կանոնների ենթադրյալ խախտման հետ կապված հարցեր, որոնք վերաբերում են վստահորդի հետ փոխհարաբերություններին, և, որոնց կարող էր անդրադառնալ միայն Փաստաբանի վստահորդ Արսեն Մինասյանը, որպիսի պայմաններում դիմումով Փաստաբանին վերագրվող վարքագիծը քննարկվելու է բացառապես Դիմողին մատուցված ծառայությունների համատեքստում՝ հաշվի առնելով, որ **Կանոնագրքի 2.6.4-րդ ենթակետի համաձայն՝** *նույն կանոնագրքի 2.7.2 ենթակետի և 3-րդ գլխով նախատեսված կանոնների խախտման հիմքով՝ հաշվի առնելով վստահորդ-փաստաբան հարաբերություններից բխող առանձնահատկությունները, կարգապահական վարույթ կարող է հարուցվել միայն վստահորդի (այդ թվում՝ նախկին) հաղորդման հիման վրա, բացառությամբ նույն գլխի 3.1.6, 3.1.7, 3.1.8, 3.1.9, 3.1.10, 3.2.1, 3.2.5, 3.5.1, 3.5.3, 3.5.4 ենթակետերից որևէ մեկում նշված կանոնի խախտման դեպքի:*

Ըստ այդմ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Փաստաբանը, ստանձնելով Դիմողի շահերի պաշտպանությունը, փաստացի անցել է իրեն տրված հանձնարարության կատարմանը այն պահից, երբ Դիմողը քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ, ինչի մասին կատարվել է առանձին նշում << Դատախազության Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության 25.06.2024 թվականի թիվ 51/3733-24 գրության մեջ:

Այս համատեքստում հատկանշական է, որ Դիմողի դժգոհությունը ուղղակիորեն կապված է այն հանգամանքի հետ, որ Փաստաբանը մասնակցել է միայն երկու քննչական գործողությունների և չի ներկայացրել իրեն հանձնված լուսանկարները և ձայնագրությունները պարունակող կրիչները:

Տվյալ դեպքում, անդրադառնալով նշված պնդումներին առանձին-առանձին, Հանձնաժողովը, կարգապահական վարույթի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների ու դրանց կից ներկայացված նյութերի հաշվառմամբ, եզրահանգում է, որ քրեական գործի շրջանակներում է փաստացի անցկացվել Դիմողին վերաբերելի ընդամենը երկու քննչական գործողություն:

Նշված քննչական գործողություններին մասնակցել է նաև Դիմողի պաշտպանությունն իրականացնող Փաստաբանը, ինչի հաշվառմամբ ակնհայտ է, որ Փաստաբանը չէր էլ կարող մասնակցել այնպիսի քննչական գործողությունների, որոնք անցկացված չեն եղել, հետևապես, չէր էլ կարող կատարել որևէ գործողություն:

Բացի այդ, Փաստաբանի կողմից ներկայացվել է, ինչպես նաև վարույթի նյութերում առկա են նաև Դիմողի կողմից մատնանշված կրիչները՝ լուսանկարներով ու ձայնագրություններով, որոնց վերաբերյալ առկա են նաև վարույթն իրականացնող մարմնի արձանագրությունները զննության մասին, ինչի հաշվառմամբ հերքվում է Փաստաբանին վերագրվող այդ վարքագիծը:

Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ կարգապահական վարույթի շրջանակներում Դիմողն ըստ էության չի ներկայացրել որևէ ապացույց առ այն, որ Փաստաբանը զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարողացել ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը, ինչն ուղղակիորեն փոխկապակցված է եղել քննչական գործողությունների չմասնակցելու հետ, որպիսի հանգամանքի հաստատված չլինելու պայմաններում հերքվում է նաև Դիմողի այս պնդումը:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ կարգապահական վարույթի շրջանակներում Դիմողի ներկայացված այլ դիտարկումներին անդրադարձ չի կատարվում, հաշվի առնելով, որ դրանք վերաբերելի չեն սույն գործով քննարկման առարկա հանդիսացող հարցերին:

Հաշվի առնելով ողջ վերոգրյալը՝ Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և դրանց կից ներկայացված փաստաթղթերն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ սույն կարգապահական գործի շրջանակներում բացակայում է փաստաբան Էդվարդ Վոլոդյայի Չինարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Էդվարդ Վոլոդյայի Չինարյանի (արտոնագիր՝ թիվ 288) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.1.8 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-24158 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-24158-2-Ա
30 հոկտեմբերի 2024թ.
ք.Երևան